

# ԵՐԵՎԱՆԻ ԴԱՐԱՄԱԿԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

#### ԳԼՈՒԽ 1

##### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

###### Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է *Արցախի<sup>8)</sup>* Հանրապետությունում գույքահարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է *Արցախի<sup>8)</sup>* Հանրապետությունում գույքահարկ վճարողների շրջանակը, գույքահարկով հարկվող օբյեկտն ու հարկման բազան, գույքահարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը, սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը:

###### Հոդված 2. Գույքահարկի հասկացությունը

Գույքահարկը սեփականության իրավունքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Անկախ սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված սեփականության իրավունքի առկայությունից՝ գույքահարկ հաշվարկվում և վճարվում է նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված հարկվող օբյեկտ համարվող գույքի համար:

###### Հոդված 3. Գույքահարկ վճարողները

1. Գույքահարկ վճարող են համարվում *Արցախի<sup>8)</sup>* Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից *Արցախի<sup>8)</sup>* Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, *Արցախի<sup>8)</sup>* Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց *Արցախի<sup>8)</sup>* Հանրապետության տարածքում պատկանում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ *Արցախի<sup>8)</sup>* Հանրապետության պետական մարմինների, *Արցախի<sup>8)</sup>* Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

2. Եթե հարկվող օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա գույքահարկի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

Եթե հարկվող օբյեկտն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա գույքահարկի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են պատասխանատվություն՝ յուրաքանչյուրն իր բաժնի չափով:

3. Եթե հարկման օբյեկտը *լիզինգի* առարկա է, ապա գույքահարկ վճարող է համարվում *լիզինգառուն:*<sup>8)</sup>

#### ԳԼՈՒԽ 2

##### ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ, ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

###### Հոդված 4. Գույքահարկով հարկվող օբյեկտը

Սույն օրենքի հմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում.

1. Շենքերը և շինությունները (այսուհետ՝ շինություններ).

1) բնակելի նշանակության շինությունները, այդ թվում՝

ա) անհատական բնակելի տունը՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառուցը,

բ) բնակարանը՝ բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար

նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,

գ) այգետնակը (ամառանոցը)<sup>3)</sup> այգեգործական զանգվածում հողամասի վրա կառուցված ամառանոցային շինությունը:

2) Բազմաբնակարան բնակելի շենքը՝ մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող շինությունը:

3) Բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքը՝ բազմաբնակարան շենքում բնակարան, հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը:

4) Ավտոտնակը՝ տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունը:

5) Հասարակական նշանակության շինությունը՝ բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունը:

6) Արտադրական նշանակության շինությունը՝ արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և դրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող շինությունը:

7) *Արցախի<sup>4)</sup>* Հանրապետության կառավարության սահմանած կարգով բնութագրվող անավարտ (կիսակառուց) շինությունները:

8) *Արցախի<sup>4)</sup>* Հանրապետության օրենսդրության համաձայն, նոր կառուցված, ծեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված սույն հողվածի 1-ին մասում նշված այն շինությունները, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերը և շինությունները, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքներին կից ինքնակամ կառույցները.<sup>5)</sup>

2. Փոխադրամիջոցները, այդ թվում՝

1) ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը,

2) ջրային փոխադրամիջոցը,

3) մոտոցիկլը.<sup>4)</sup>

4) ծյունագնացը.

5) մոտոամենագնացը (բվադրոցիկլը):<sup>4)</sup>

## Հոդված 5. Գույքահարկով հարկման բազան

Գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիմնա վրա սույն օրենքով սահմանված որույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Ընդ որում.

1) շինությունների հարկման բազա է համարվում սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը:

2) շինությունների հարկման բազան որոշելիս շինության արժեքի չափման միավորը դրամն է:

3) շինությունների գնահատումը (Վերագնահատումը) կատարվում է երեք տարին մեկ անգամ, անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ գնահատման (Վերագնահատման) տարվա հուլիսի 1-ի որությամբ հաշվառված տվյալներով: Գնահատված (Վերագնահատված) արժեքը հիմք է ընդունվում տվյալ տարվան հաջորդող երեք տարիների համար հարկման բազան որոշելու նպատակով, բացառությամբ սույն հողվածի 4-րդ կետում նշված դեպքերի:

4) Նոր առաջացած, ինչպես նաև գնահատման (Վերագնահատման) տարվա հուլիսի 1-ից հետո *Արցախի<sup>4)</sup>* Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով ծեռք բերված շինությունների հարկման բազան որոշվում է սույն հոդվածին համապատասխան, որը հարկման առումով հիմք է ընդունվում մինչև շինությունների համար սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված հաջորդ գնահատումը (Վերագնահատումը):

Սույն օրենքի իմաստով նոր առաջացած են համարվում գնահատման (Վերագնահատման) տարվա հուլիսի 1-ի որությամբ անշարժ գույքի կադաստր վարող մարմնում գրանցված տեղեկությունների համեմատությամբ մինչև շինությունների հաջորդ գնահատումն (Վերագնահատումն) ընկած ժամանակաշրջանում շինությունների ավարտվածության աստիճանի, հարկայնության, գործառնական (բնակելի, հասարակական, արտադրական) նշանակության փոփոխությունները, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված շինությունները:

Նոր առաջացած շինությունների մասով ընթացիկ հաշվառման վերաբերյալ տեղեկությունները *Արցախի<sup>4)</sup>* Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմին են ներկայացնում սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

5) փոխադրամիջոցների հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող

փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիառութ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

#### **Հոդված 6. Շինությունների գույքահարկի դրույքաչափերը**

Շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

1) սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ և 8-րդ<sup>2)</sup> կետերում նշված հասարակական և արտադրական նշանակության շինությունների համար՝ հարկման բազայի 0.3 տոկոսը,

2) սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ կետերում նշված հարկվող օբյեկտ համարվող շինությունների համար՝

հարկման բազան	հարկի դրույքաչափը
մինչև 3 մլն դրամը ներառյալ	հարկման բազայի 0 տոկոսը
3 մլն դրամից մինչև 10 մլն դրամը ներառյալ	100 դրամ գումարած հարկման բազայի 3 մլն դրամը գերազանցող գումարի 0.1 տոկոսը
10 մլն դրամից մինչև 20 մլն դրամը ներառյալ	7100 դրամ գումարած հարկման բազայի 10 մլն դրամը գերազանցող մասի 0.2 տոկոսը
20 մլն դրամից մինչև 30 մլն դրամը ներառյալ	27100 դրամ գումարած հարկման բազայի 20 մլն դրամը գերազանցող մասի 0.4 տոկոսը
30 մլն դրամից մինչև 40 մլն դրամը ներառյալ	67100 դրամ գումարած հարկման բազայի 30 մլն դրամը գերազանցող մասի 0.6 տոկոսը
40 մլն դրամից ավելի	127100 դրամ գումարած հարկման բազայի 40 մլն դրամը գերազանցող մասի 0.8 տոկոսը

3) սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված հարկվող օբյեկտ համարվող շինությունների համար՝ հարկման բազայի 0.2 տոկոսը:

#### **Հոդված 7. Փոխադրամիջոցների գույքահարկի դրույքաչափերը**

1. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

- 1) մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
  - 1-ից 120 ձիառութ է, ապա յուրաքանչյուր ձիառութի դիմաց՝ 200 դրամ.
  - 121-ից 250 ձիառութ է, ապա յուրաքանչյուր ձիառութի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիառութը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիառութի համար լրացնից՝ 1000 դրամ.
  - 251 և ավելի ձիառութ է, ապա յուրաքանչյուր ձիառութի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիառութը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիառութի համար լրացնից՝ 1000 դրամ,

2) 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-ից 200 ձիառութ է, ապա յուրաքանչյուր ձիառութի դիմաց՝ 100 դրամ,
- 201 և ավելի ձիառութ է, ապա յուրաքանչյուր ձիառութի դիմաց՝ 200 դրամ:

2. *Մոտոցիկլերի<sup>4)</sup>* համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիառութի դիմաց՝ 40 դրամ դրույքաչափով:

3. Զրային փոխադրամիջոցների, ձյունագնացների և մոտոռամենագնացների (*քվադրոցիկլերի*)<sup>4)</sup> համար գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիառութի դիմաց՝ 150 դրամ դրույքաչափով:

4. Մինչև 3 տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով:

Եթեր տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան՝ հարկի գումարի 50 տոկոսը: Ընդ որում, վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:

5. Բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետի 20-րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկը չի հաշվարկվում և չի վճարվում:

6. Սույն հոդվածում նշված փոխադրամիջոցների հարկման բազան կիրավատերով արտահայտված լինելու դեպքում, գույքահարկի տարեկան գումարը որոշվում է համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրաշելով 1.36 գործակից:

## ԳԼՈՒԽ 3

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

#### Հոդված 8. Գույքահարկի Վճարման պարտավորության առաջանալու և դադարելու կարգը

1. Գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի նաև նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի նաև նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթներից

1) սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետում նշված՝ սեփականության իրավունքով պետական գրանցում չստացած հարկվող օբյեկտների համար գույքահարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից դրանց հաշվառման և գնահատման վերաբերյալ տեղեկությունները գույքահարկ Վճարողներին հաշվառող մարմին (այսուհետ՝ հաշվառող մարմին) տրամադրելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Սեփականության իրավունքով չգրանցվելու դեպքում, նշված հարկվող օբյեկտների համար գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնում այդ հարկվող օբյեկտները Արցախի<sup>\*8)</sup> Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումից հանելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

2) (ուժը կորցրած է ձանաչվել) <sup>\*6), \*8)</sup>

3) հարկվող օբյեկտի սեփականատեր համարվող ֆիզիկական անձի մահվան դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում ֆիզիկական անձի մահվան օրվանից մինչև Արցախի<sup>\*8)</sup> Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության (ժառանգության) ձևակերպման ամիսը ներառյալ տվյալ հարկվող օբյեկտի համար գույքահարկի գծով հաշվարկված պարտավորությունները.

4) Եթե հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է դատավճիք, վճարի կամ իրավական ակտի հիման վրա, ապա գույքահարկ Վճարողը գույքահարկը հաշվարկում և վճարում է այն օրվանից, երբ գույքը հանձնվել է նրա տիրապետմանը:

5) Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցը Արցախի<sup>\*8)</sup> Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոտանելու դեպքում գույքահարկի պարտավորությունը դադարում է: Ֆիզիկական անձի դիմումի համաձայն՝ սույն կետով սահմանված փոխադրամիջոցները լիազոր մարմնում վերահաշվարելու դեպքում, այդ փոխադրամիջոցների համար մինչև խոտանան ամսվան հաջորդող ամսվա 1-ը դադարած գույքահարկի պարտավորությունները հակադարձվում են և ենթակա են կատարման՝ սույն օրենքով սահմանված կարգով և չափերով:

Սույն կետով սահմանված արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխադրուման ենթակա է<sup>\*3), \*6)</sup>.

6) Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի օտարման օրվան հաջորդող ժամանակաշրջանի համար վճարումների արկայության դեպքում հաշվառող մարմնի կողմից այդ գումարները հաշվանցվում են հարկ Վճարողի գույքահարկի գծով այլ փոխադրամիջոցների պարտավորությունների հաշվին, իսկ որանց բացակայության դեպքում ֆիզիկական անձի դիմումի հիման վրա վերադարձվում են ոչ ուշ, քան դիմումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում.<sup>\*6)</sup>

7) լիգինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիգինգառուի մոտ գույքահարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է լիգինգի առարկայի նկատմամբ լիգինգի հրավունք պետական գրանցման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Լիգինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար լիգինգառուի մոտ գույքահարկի հաշվարկումը դադարում է լիգինգի (տարատեսակների) առարկայի նկատմամբ լիգինգի հրավունքի դադարման ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

8) լիգինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար գույքահարկի գծով հարկային պարտավորությունն սույն մասի 7-րդ կետով սահմանված ժամանակահատվածում կատարում է լիգինգառուն, իսկ լիգինգառուի մոտ այլ նույն ժամանակահատվածում լիգինգի (տարատեսակների) պայմանագրով լիգինգի առարկա համարվող հարկման օբյեկտների համար գույքահարկի գծով հարկային պարտավորությունը չի հաշվարկվում:<sup>\*8)</sup>

3. Գույքահարկ Վճարողները գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն՝ ենթելով սույն օրենքով սահմանված հարկման բազայից և համապատասխան դրույքափերից, հաշվի առնելով գործող օրենսդրությամբ վերապահված արտոնությունները: Գույքահարկ Վճարողը պարտավոր է հաշվառող մարմին ներկայացնել հարկային արտոնությունների իր հրավունքը հաստատող փաստաթղթերը:

Գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջաման) համար հիմք են հանդիսանում գույքահարկով հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը, իսկ սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետով և սույն հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով սահմանված դեպքերում՝ համապատասխանաբար նաև դրանց հաշվառման կամ պետական գրանցման

**Վերաբերյալ տեղեկությունները:**<sup>8)</sup>

4. Հարկվող օբյեկտ համարվող գույքի նկատմամբ **Արցախի**<sup>8)</sup> Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառված որևէ արգելանքի առկայությունը հիմք չի համարվում գույքահարկը չհաշվարկելու համար:

#### **Հոդված 9. Կազմակերպությունների գույքահարկի հաշվարկման կարգը**

1. Կազմակերպությունների համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:<sup>8)</sup>

2. Գույքահարկ վճարող կազմակերպությունները հարկային մարմնի հաստատած ձևով գույքահարկի տարեկան հաշվարկը կարող են մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ «Հարկերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի «գ» կետով սահմանված եղանակներով ներկայացնել։<sup>8)</sup>

1) հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով՝ շինության գտնվելու վայրի համապատասխան հաշվառող մարմին.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների մասով՝ իրեմց գտնվելու վայրի համախատասխան հաշվառող մարմին։<sup>6)</sup>

3. Գույքահարկ վճարող կազմակերպության կողմից ներկայացված գույքահարկի հաշվարկմերում պիտի հայտնաբերվելու դեպքում հիմք են ընդունվում համապատասխան հաշվառող մարմնի տվյալները, ինչի մասին գույքահարկ վճարող կազմակերպությունը գրավոր ժանուցվում է։<sup>8)</sup>

#### **Հոդված 10. Ֆիզիկական անձանց գույքահարկի հաշվարկման կարգը**

1. Ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

2. Գույքահարկ վճարող ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն և տարեկան հաշվարկները կարող են մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնել։<sup>8)</sup>

1) հարկվող օբյեկտ համարվող շինության համար՝ շինության գտնվելու վայրի հաշվառող մարմին.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար՝ հարկ վճարողի հաշվառման վայրի հաշվառող մարմին։ Հաշվառման վայրի բացակայության դեպքում հաշվարկները ներկայացվում են հարկ վճարողի հիմնական բնակության վայրի հաշվառող մարմին։ Եթե հաշվառման կամ հիմնական բնակության վայրը Արցախի<sup>8)</sup> Հանրապետության տարածքից դուրս է, ապա հաշվարկները ներկայացվում են փոխադրամիջոցի գրանցման վայրի հաշվառող մարմին։

3. Հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման, ինչպես նաև փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացրած տեղեկությունները՝ կարող են հաշվարկել ֆիզիկական անձանց շինությունների հետագա երեք տարիների և փոխադրամիջոցների ընթացիկ տարվա գույքահարկի գումարները։

2005թ. հունվարի 1-ից սկսած՝ տեղական ինքնակառավարման մարմինները, **Արցախի**<sup>8)</sup> Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով գույքահարկի հաշվարկման հայտը հարկային մարմնի հետ համաձայնեցնելով, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման, ինչպես նաև փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացրած տեղեկությունները՝ կարող են հաշվարկել ֆիզիկական անձանց շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկը։

Տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինները, սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված տեղեկությունների կամ հարկային մարմինների հետ համաձայնեցված կարգով իրենց կողմից կատարված հաշվարկների հիման վրա, մինչև գնահատման (վերագնահատման) տարվա դեկտեմբերի 1-ը գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց ներկայացնում են հաստատված ձևով գույքահարկի վճարման ժամանակագրեր։

Ներկայացված ժամանակագրերում գույքահարկի հաշվարկի հետ չհամաձայնելու դեպքում, ֆիզիկական անձինք գույքահարկի հաշվարկի հաշվարկը հաշվարկման նախառակով կարող են դիմել հաշվառող և գույքահարկի հաշվարկման համար տեղեկություններ տրամադրող լիազոր մարմիններ։

4. Սահմանված ժամանակագրերում ուշ ժամանակագրի ներկայացնելը կամ ժամանակագրի ներկայացնելը գույքահարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից։

#### **Հոդված 11. Ընդհանուր սեփականության գույքահարկի հաշվարկման կարգը**

1. Ընդհանուր սեփականություն հանդիսացող՝ գույքահարկով հարկվող օբյեկտի համար, գույքահարկը հաշվարկում է հարկվող օբյեկտի ամբողջ արժեքից (կամ շարժիչի հզորությունից), հաշվառող մարմինների կողմից։

2. Λαζαρεστη ο μαρμήνας της, ήτη μέρη που περιλαμβάνει την αποθήκη και την εγκατάσταση της στην πόλη της Αρτεμίδης, η οποία θα γίνεται διαθέσιμη για όλους τους πολίτες της πόλης της Αρτεμίδης.

1) Η ρύθμιση της αποθήκης θα γίνεται στην πόλη της Αρτεμίδης, σε μια περιοχή που θα είναι διαθέσιμη για όλους τους πολίτες της πόλης της Αρτεμίδης.

2) Η ρύθμιση της αποθήκης θα γίνεται στην πόλη της Αρτεμίδης, σε μια περιοχή που θα είναι διαθέσιμη για όλους τους πολίτες της πόλης της Αρτεμίδης.

## Ληξιαρχία 12. (ποιότητα η οποία αποτελεί την αποθήκη)

## Ληξιαρχία 13. Ορισμός της αποθήκης

1. (ποιότητα η οποία αποτελεί την αποθήκη)

2. Καθημερινά πρόσωπα που διαχειρίζονται την αποθήκη θα είναι οι αποθηκευτές της αποθήκης, οι οποίοι θα είναι διεύθυντες την λειτουργία της αποθήκης.

Λαζαρεστη ορίζεται ο πρόσωπος που διαχειρίζεται την αποθήκη, ο οποίος θα είναι ένας από τους διεύθυντες της αποθήκης.

Λαζαρεστη ορίζεται ο πρόσωπος που διαχειρίζεται την αποθήκη, ο οποίος θα είναι ένας από τους διεύθυντες της αποθήκης.

Ρωμαϊκή αποθήκη θα είναι η αποθήκη που διαχειρίζεται την αποθήκη, ο οποίος θα είναι ένας από τους διεύθυντες της αποθήκης.

Λαζαρεστη ορίζεται ο πρόσωπος που διαχειρίζεται την αποθήκη, ο οποίος θα είναι ένας από τους διεύθυντες της αποθήκης.

3. Λαζαρεστη ορίζεται ο πρόσωπος που διαχειρίζεται την αποθήκη, ο οποίος θα είναι ένας από τους διεύθυντες της αποθήκης.

1) Η αποθήκη θα είναι διαθέσιμη για όλους τους πολίτες της πόλης της Αρτεμίδης, οι οποίοι θα μπορέσουν να αποθηκεύουν στην αποθήκη τα αντικείμενα τους.

2) Η αποθήκη θα είναι διαθέσιμη για όλους τους πολίτες της πόλης της Αρτεμίδης, οι οποίοι θα μπορέσουν να αποθηκεύουν στην αποθήκη τα αντικείμενα τους.

4. Το πρόσωπο που διαχειρίζεται την αποθήκη θα είναι ένας από τους διεύθυντες της αποθήκης.

փաստաթուղթը: Ֆիզիկական ամձի դիմումի համաձայն՝ փոխադրամիջոցները լիազոր մարմնում վերահաշվառվում են գույքահարկ վճարողին հաշվառող մարմնի կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով գույքահարկի պարտավորությունները չունենալու տեղեկանքի հիման վրա:՝<sup>3), 76)</sup>

#### Հոդված 14. Տեղեկությունների տրամադրումը և գույքահարկի հավաքումը

1. Արցախի<sup>38)</sup> Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

1) Գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինությունների ու դրանց գնահատությունների, ինչպես նաև փոխադրամիջոցների վերաբերյալ տեղեկությունները գույքի նշված տեսակների պետական գրանցումն (հաշվառումն) իրականացնող լիազոր մարմինները ներկայացնում են հաշվառող մարմին,

2) հարկային և տեղական ինքնակառավարման մարմինները գույքահարկի գծով պարտավորությունների հաշվարկման, գույքահարկի գումարների գանձման և վճարումների հաշվառման նպատակով միմյանց ներկայացնում են անհրաժեշտ տեղեկություններ,

3) տեղական ինքնակառավարման մարմինները ընթացիկ հաշվառման անհրաժեշտ տեղեկությունները են ներկայացնում անշարժ գույքի կադաստր վարող մարմիններ:

2. Գույքահարկ վճարողները գույքահարկի հաշվարկման նպատակով օրենքով սահմանված կարգով կարող են անհրաժեշտ տեղեկություններ ստանալ սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազոր մարմիններից:

3. Արցախի<sup>39)</sup> Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններն, որպես պետության պատվիրակած լիազորություն, իրականացնում են գույքահարկի գանձումը:

## ԳԼՈՒԽ 4

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՇՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Հոդված 15. Գույքահարկի գծով արտոնությունները

1. Գույքահարկից ազատվում են.

1) Արցախի<sup>38)</sup> Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գծային ինժեներատրանսպորտային շինությունները, եթե դրանցից օգտվելու համար վճար չի գանձվում,

2) ջրամբարները,

3) Արցախի<sup>38)</sup> Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական սեփականություն հանդիսացող պատմամշակութային նշանակության հարկվող օբյեկտ համարվող շինությունները՝ Արցախի<sup>38)</sup> Հանրապետության կառավարության սահմանած ցամկին համապատասխան, ինչպես նաև կրոնական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ մինչև 1991 թվականը կառուցված Արցախի<sup>38)</sup> Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշտամունքային շենքերն ու շինությունները: Կրոնական կազմակերպություններն ազատվում են նաև իրենց սեփականության իրավունքով պատկանող՝ սույն կետում նշված շենքերի և շինությունների համար 2007 թվականի հունիսի 1-ի դրությամբ հաշվարկված գույքահարկի, ինչպես նաև այդ գումարները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումից: Կրոնական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ սույն կետում նշված շենքերի և շինությունների մասով սահմանված հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխառուցման ենթակա չէ:<sup>3)</sup>

Գույքահարկից ազատվում են նաև Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմին սեփականության իրավունքով պատկանող՝ հուշարձանի կարգավիճակ չունեցող Եկեղեցիները, հոգևոր մշակութային, կրթադպուտական, Եկեղեցական և ծիսական պարագաների արտադրության և իրացման համար օգտագործվող շենքերն ու շինությունները, որոնց ցանկը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը.<sup>77)</sup>

3.1) Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմն իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ սույն մասի 3-րդ կետում նշված շենքերի և շինությունների համար 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված գույքահարկի, ինչպես նաև այդ գումարները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումից: Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի թեմին սեփականության իրավունքով պատկանող՝ սույն կետում նշված շենքերի և շինությունների մասով սահմանված հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխառուցման ենթակա չէ.<sup>77)</sup>

4) Արցախի<sup>38)</sup> Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում գոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած և օրենքով

սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) պատկանող գույքը՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը.

5) սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ամսովնեքենաների մասով: Հաշմանդամներին սեփականության իրավունքով պատկանող՝ սույն կետում նշված ավտոմեքենաների մասով սահմանված հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ.

6) փոխային կապի ազգային օպերատորը:<sup>⑥)</sup>

2. Ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում են Արցախի<sup>⑦)</sup> Հանրապետության միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների, ինչպես նաև Արցախի<sup>⑧)</sup> Հանրապետության գինված ուժում և այլ գորքերում պարտադիր ժամկետային գինվորական ծառայության մեջ գտնվող անձինք՝

1) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքահարկով հարկվող օրենկանարկով՝ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինուալիքուն չհանդիսացող շենքերի և շինուալիքունների (և (կամ) փոխադրամիջոցների մասով).

2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ սույն մասի 1-ին կետում նշված՝ գույքահարկով հարկվող օրենկանարկով հարկվող օրենկանարկով՝ իրենց բաժնի մասով.

3) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ սույն մասի 1-ին կետում նշված՝ գույքահարկով հարկվող օրենկանարկով՝ մասով, եթե մուս համասեփականատերերն անչափահաս կամ անաշխատունակ անձինք են:

Սույն մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան, պարտադիր ժամկետային ծառայության ժամկետի ավարտից հետո, գույքահարկից ազատվում են նաև Արցախի<sup>⑨)</sup> Հանրապետության գինված ուժում և այլ գորքերում ծառայություն անցած՝ ռազմառություններն ավարտած անձինք՝ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինուալիքուն չհանդիսացող մեկ շինուալիքան մասով, որի հարկման բազան չի գերազանցում 40.0 մետր (չգերազանցող մասով) և մեկ փոխադրամիջոցի մասով, որի հարկման բազան չի գերազանցում 150 ծինաուժը (չգերազանցող մասով):

Սույն մասում նշված՝ սեփականության իրավունքով հարկ վճարողին մեկից ավելի շինուալիքուն պատկանելու դեպքում արտոնությունը կիրառվում է հարկ վճարողի կողմից ընտրված շինուալիքան նկատմամբ, իսկ արտոնությունների կիրառման համար հիմք է ընդունվում անշարժ գույքի կաղաստը վարող լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքը՝ անձին սեփականության իրավունքով պատկանող շինուալիքունների թվաքանակի և գումարի վայրերի մասին, ինչպես նաև շինուալիքան գումարի վայրի (վայրերի) հաշվառող մարմնի կողմից տրված տեղեկանքը՝ այլ շինուալիքան մասով արտոնություն կիրառված չլինելու մասին:

Սույն մասով նշված սեփականության իրավունքով հարկ վճարողին մեկից ավելի փոխադրամիջոց պատկանելու դեպքում արտոնությունը կիրառվում են հարկ վճարողի կողմից ընտրված փոխադրամիջոցի մասով, իսկ արտոնությունների կիրառման համար հիմք է ընդունվում ուստիկանության լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքը՝ անձին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցի թվաքանակի մասին և (կամ) փոխադրամիջոցի գրանցման վայրի հաշվառող մարմնի կողմից տրամադրված տեղեկանքը՝ այլ փոխադրամիջոցների մասով արտոնություններ կիրառված չլինելու մասին:

Սույն մասով սահմանված արտոնությունները չեն կիրառվում, եթե հարկվող օրենկանարկով գույք ծառայության ընթացքում կամ ծառայության ավարտից հետո հանձնվել է վարձակալության կամ հավատարմագրային կառավարման, ինչպես նաև եթե հարկվող օրենկանարկով գույքը ձեռք է բերվել ծառայության ժամկետի ավարտից հետո:

Սույն մասով սահմանված հարկային արտոնությունների տրամադրման հետևանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:<sup>⑩)</sup>

3. Արցախի<sup>⑪)</sup> Հանրապետության կառավարության սահմանած կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ:

Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը:

Համայնքի ավագանու կողմից գույքահարկի գծով սահմանված արտոնությունների գումարի դիմաց Արցախի<sup>⑫)</sup> Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դուտացիաներ չեն տրամադրվում:

4. Օրենքով կարող են սահմանվել գույքահարկի գծով այլ արտոնություններ:

**Հոդված 16. Հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի արտոնության առաջանալը կամ դադարելը**

1. Հաշվետու տարվա ընթացքում արտոնություն ունեցող գույքահարկ վճարողը գույքահարկը վճարելուց ազատվում է այն անսվա 1-ից, եթե առաջացել է արտոնության իրավունքը:

2. Հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի արտոնությունը դադարելու դեպքում գույքահարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

## ԳԼՈՒԽ 5

### ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 17. Սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները, ինչպես նաև գույքահարկի հաշվարկման համար ոչ ճիշտ տեղեկություններ տրամադրած լիազոր, տեղական ինքնակառավարման մարմիններն ու դրանց պաշտոնատար ամձիմք պատասխանատվություն են կրում Արցախի<sup>8)</sup> Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. (ուժը կորցրած է ձանաշվել) <sup>8)</sup>
3. (ուժը կորցրած է ձանաշվել) <sup>8)</sup>

4. Սույն օրենքով սահմանված գույքահարկի վճարման գժով խախտումներ հայտնաբերվելու դեպքում գույքահարկի գժով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը կատարելուց հետո անցել է տասը տարի: \*<sup>6)</sup>

#### Հոդված 18. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

Արցախի<sup>8)</sup> Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Արցախի<sup>8)</sup> Հանրապետության հարկային պետական վարչությունը՝ համաձայնեցնելով Արցախի<sup>8)</sup> Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, իսկ սույն օրենքի հավելվածի վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը՝ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմինը՝ համաձայնեցնելով Արցախի<sup>8)</sup> Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Արցախի<sup>8)</sup> Հանրապետության հարկային պետական վարչության հետ:

## ԳԼՈՒԽ 6

### ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Հոդված 19. Ժամկետային արտոնությունների գործողությունը

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը 1999 թվականի մարտի 29-ի «Գույքահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի վերջին պարբերությամբ սահմանված ժամկետային արտոնությունները շարունակում են գործել մինչև դրանց ժամկետի ավարտը:

#### Հոդված 20. Օրենքն ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:  
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ձանաշել «Գույքահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999 թվականի մարտի 29-ի ՀՕ-54 օրենքը:

#### Հոդված 21. Շինությունների հարկման բազայի գնահատումը

Սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված գնահատման կարգով՝

1) բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շինությունների հարկման բազայի գնահատումը կատարվում է 2004 թվականի հուլիսի 1-ի դրությամբ,

2) նոր կառուցված բնակելի շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերի ոչ բնակելի տարածքների, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված շինություններից բնակելի շինությունների հարկման բազայի գնահատումը կատարվում է 2004 թվականի հունվարի 1-ից սկսած:

#### Հոդված 22. Շինությունների 2004 թվականի գույքահարկը

1. Ֆիզիկական անձանց պատկանող հասարակական և արտադրական նշանակության շինությունների 2004 թվականի գույքահարկը վճարվում է այդ շինությունների 2003 թվականի համար հաշվարկված գույքահարկի համապատասխան գումարների չափով:

Ֆիզիկական անձանց պատկանող, սույն օրենքի 4-րդ հոդվածում նշված հարկվող օբյեկտ համարվող մնացած շինությունների 2004 թվականի գույքահարկը հաշվարկվում և վճարվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը շինությունների համար գործող գնահատման կարգով գնահատված արժեքներից, իսկ սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ կետում նշված շինությունների համար՝ սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով գնահատված արժեքներից, սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված տարեկան դրույքաչերով:

2. Կազմակերպություններին պատկանող շինությունների գույքահարկը հաշվարկվում է

հաշվեկշիռներում (հաշվետվություններում) արժեքային արտահայտությամբ հաշվառված շինությունների մնացորդային արժեքից, բայց ոչ պակաս դրանց սկզբնական (ձեռքբերման) արժեքի քան տոկոսից: Ընդունում՝

1) հասարակական և արտադրական նշանակության շինությունների 2004 թվականի գույքահարկը հաշվարկում են 0.6 տոկոս տարեկան դրույքաչափով,

2) սույն օրենքի 4-րդ հոդվածում նշված հարկվող օբյեկտ համարվող մնացած շինությունների 2004 թվականի գույքահարկը հաշվարկվում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված տարեկան դրույքաչափերով:

#### **Հոդված 23. Գույքահարկ Վճարողներին հաշվառող մարմինները**

Սույն օրենքի իմաստով գույքահարկ Վճարողներին հաշվառող մարմիններ են համարվում՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմինները՝ մինչև 2005 թվականի հունվարի 1-ը,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները՝ 2005 թվականի հունվարի 1-ից սկսած:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկ Վճարողների հաշվառման կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

**Ա.ՊՈՒԿԱՍՅԱՆ**

**23 դեկտեմբերի 2003թ.  
ք.Ստեփանակերտ  
ՀՕ-72**

## ՃԵՆՔԵՐԻ, ՃԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱԿԱՏՄԱՆ ԿԱՐԳԵՐ

### 1. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՃԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՆԱԿԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

1.1. Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կադաստրային գնահատման արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա=Ա_գ x Մ x Գ_գ x Գ_ծ x Գ_բ x Գ_հ x Գ_վ x Գ_ճ x Գ_ա$$

որտեղ՝

Ա-ը՝ բնակարանի մեկ քառակուսի մետրի արժեքը՝ ըստ այլուսակ 1-ի,

